# ԱՒԵԼԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

(Շարունակուած էջ 2-էն)

կական շրջաններէ: Վրաստանի իշխանութիւնները չեն խոչընդոտում, որովհետեւ Հայաստանի Ամերիկեան Համալսարանի մասնացումը, ինչպէս նշուեց, քաղաքական չէ, քանի որ մարդկանց բերելու գաղափարականութիւն է տրւում եւ վարկերն էլ յատկացւում են անկախ վարկառու միջոցով: Միակ խնդիրն այն է, որ տեղում այդ դրամատուների եւ բանկերի հետ յարաբերութիւնները սուղ են եւ բարդ է նրանց հետ յարաբերելը: Բաւական խրթին ու անհասկանալի է վճարային կառոյցների աշխատակարգը:

Խնդիրներ չկան հայ համայնքից ուսանողներ ներգրաւելու հարցում: Այս հարցն ընդհանրական է, բայց աւելի դիւրին է, օրինակ՝ Ջաւախքի հայկական միջավայրում, Պէյրութում, Դամասկոսում, Մոսկուայում, Նոր Նախիջեւանում եւ ընդհանրապէս Հարաւային Ռուսաստանում:

Ինչպէս ասուեց, այս ծրագրերը բացառապէս հայերի համար են եւ զուգահեռաբար մեծ ջանք է ներդրւում, որպէսզի անգլիական մարմինները ոչ միայն չխոչընդոտեն, այլեւ օգնեն մեզ, քանի որ ՀԱՀ-ի դռները բաց են անգամ տարիների առջեւ: Չէ որ անցած տարիներին Համալսարանն ունեցել է չինացի, հնդիկ եւ մոլդովացի ուսանողներ: Բայց այդ հարցում առանձնապէս հետաքրքրութիւն չունենք, որովհետեւ տարբեր երկրներում կեցուածքներն էլ հայի հանդէպ տարբեր են:

Եթէ երբեւէ յարաբերութիւնները կարգաւորուեն, ձեւաւորուեն ու բարելաւուեն, մեզ համար կարեւոր կը լինի ուսանող ընդգրկել նաեւ Թուրքիայի քրդական շրջաններից, որպէսզի նրանք ծանօթանան Հայաստանին: Պէտք է հեռուն նայել: Համոզուած եմ, որ առաջիկայում Թուրքիան մասնատուած կը լինի եւ քրդերի հետ այժմուանից պէտք է բարեկամ յարաբերութիւններ ստեղծել եւ ունենալ:

Յատկանշական է, որ անցած տարի 5-ն հոգուց հայ ուսանող այցելել Թուրքիա եւ բարձրացել Արարատ: Համոզուած եմ, որ մի քանի հայ հայի, բայց մի քանիսն էլ կարող է ազգայնական են:

Մենք Հայաստանի Ամերիկեան Համալսարան ենք, անունն ընդգծուած է եւ բաց լինում ենք հայերի համար:

Եթէ վերադառնանք անդրադառնալով իրագործուելիք գործունէութիւններին, ապա կան ծրագրեր, որ շարունակական են եւ ընթացքի մէջ են՝ առողջապահական, տնտեսական եւ այլ ոլորտների բարելաւման: Այս կէտի վրայ ուսանողների թիւը մօտ 300 է:

Ի՞նչ նոր պայմաններում ջանքերը կենտրոնացած են ակադեմիական ծրագրերի զարգացման վրայ, բայց հիմնական ուղղութիւնը, պայմանները՝ բաց աւելի երկրի, պահանջների են լինելու եւ թէ որո՞նք են առաջնային խնդիրները:

Հանդիսութեամբ եւ յիշեցրեց, որ ցանկալի է ունենալ նաեւ Հիւսիսային Ամերիկայի բաժին, այսինքն՝ ամերիկեան ուսումնասիրութիւնների ծրագիր, որը յաջողութեամբ իրագործուել է այլ երկրներում:

Ներկայումս երեք պետական ու մէկ մասնաւոր համալսարաններ համագործակցում են ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան աջակցութեամբ: Դրանք են՝ Երեւանի Պետական, Ճարտարապետական, Բժշկական եւ Հայաստանի Ամերիկեան համալսարանները: Այս չորս համալսարանների ղեկավարները ուսումնական տարուայ ողջ ընթացքում մի քանի անգամ հանդիպում են, քննարկելով ու առաջ տանելով գործնական ծրագրեր. մէկնարկ է բերում գործնական միացեալ ծրագրերից մէկը:

Վերջինը, որ վաւերացուեց, դա ՀԱՀ-ի ամառային դասընթացն էր, աւելի ճիշդ, ամերիկահայ բուհական մօտ 30 ուսանողների համար՝ ՀԲԸՄ-ի մասնակի ֆինանսաւորմամբ իրագործուած մօտ 4 շաբաթեայ ծրագիրը:

2007Թ. UCLA-ի 10 ուսանողների մի խումբ առողջապահական եռկշաբաթեայ սպասարկութիւնների քննարկման խնդրով այցելեց Հայաստան եւ ՀԱՀ-ի ծրագրով աշխատեց հիւանդանոցներում:

Ամառային նմանատիպ կարճաժամկէտ ծրագրերը յաճախակի են:

Վերջերս ստեղծուած ՀՀ Սփիւռքի նախարարութիւնը ՀԱՀ-ի հետ որեւէ կապ չունի, եւ նա պէտք է, ի տարբերութիւն հնի, կենտրոնանայ նոր խնդիրների վրայ, չմոռանալով ժամանակի լաւագոյն ձեռքբերումները: Սակայն, եթէ համագործակցութեան որեւէ առիթ ներկայանայ, պատրաստ ենք:

Չմոռանանք, որ այս տարի՝ Մայիսի 20-22-ը ՀԱՀ-ն Երեւանում հրաւիրում է ամերիկեան համալսարանների նախագահների տարեկան ժողովը: Կը կայանայ նաեւ այլ կառոյց ներկայացնող նոյն այդ համալսարանների գրադարանների տնօրէնների ժողովը, որոնց, անշուշտ կ'անդրադառնայ մեր թերթը:

Երեւան